

Կանոնագրասկ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՑԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



թիվ 33



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԻՍ هانراکيداق HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 33 || 16 ՕԴՈՍՏՈՍ 1903



ԼՈՐՏ ՍԱԼՁՊՐԻ

ՀԱՄԱՌՕՏ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն 32րդ թիւէն)

- Գոյացութիւն ցուցնող բառերը ի՞նչ կ'կոչուին եւ քանի՞ տեսակ են:
- Գոյական կ'ըսուին, եւ երկու տեսակ են. իրօք գոյութիւն ունեցող իրերու կամ անհատներու անուններ, եւ վերացեալ կամ սեռի անուններ որք բնութեան մէջ իրական գոյութիւն չ'ունին. ուստի և երկու տեսակ գոյականներ կան, Յատուկ և Հասարակ:
- Յատկութիւն ցոյցնող բառերն ի՞նչ կ'կոչուին.
- Ածական կ'կոչուին:
- Միտքն իր դատողութիւններուն երկու եզրները, ենթական եւ ստորոգելին միշտ պա՞րզ կ'ըմբռնէ:
- Շատ անգամ զանոնք յաւելուածներով կ'ըմբռնէ:
- Յաւելուածն ի՞նչ է:
- Յաւելուած կամ խնդիր կ'ըսուի առարկայ մը որ ենթակայ յին կամ ստորոգելոյն հետ յարաբերութեան մէջ է:
- Յարաբերութեան մէջ ըլլալն ի՞նչ է.
- Երկու բան իրարու հետ յարաբերութեան մէջ կ'ըսուին. երբ որեւիցէ կերպով իրարու կ'վերաբերին. զորօրինակ՝ երբ մէկը ստացիչ է՝ միւսն ստացեալ. մէկը գործող՝ միւսը գործողութեան առարկայ, եւ կամ մէկը միւսին պարագան է:
- Ո՞րն է խօսքի մէջ յարաբերութիւն ցուցնող բառը.
- Յարաբերութիւն ցուցնող բառն է Նախադրութիւն եւ Շաղկապ. Նախադրութիւնը բառերու յարաբերութիւնը կ'ցուցնէ. Շաղկապը՝ նախադասութիւններու:
- Ուրեմն բառերը քանի՞ տեսակ են:
- Բառերը՝ ճիշդը խօսելով՝ չորս տեսակ են. Ա. Գոյացութեան բառեր (գոյական), Բ. Յատկութեան բառեր (Ածական). Գ. Հաստատող բառ (Բայը՝ որ էական բայն է), Դ. Յարաբերութեան բառեր (Նախադրութիւն և Շաղկապ):
- Լեզուաց մէջ այս չորս տեսակէն զատ ուրիշ տեսակ բառեր չի կա՞ն:
- Կան. այսինքն՝ Դերանուն, Յօդ, Ընդունելութիւն (անցեալ դերբայ), Մակբայ և Ձայնաւորութիւն: Բայց դերանունը գոյականին կը վերաբերի, „յօդն ու ընդունելութիւնը՝ ածականին, մակբայը հաւասար է խնդրով մէկտեղ նախադրութեան, ձայնարկութիւնն ալ ամբողջ խօսքի մը համահաւասար է:
- Միտքն իր դատումները իրարու նկատմամբ ի՞նչպէս կ'ըմբռնէ:
- Միտքն առարկայի մը կամ իրողութեան մը վրայ ըրած դատումները միշտ իրարու հետ յարաբերութեան մը մէջ կ'ըմբռնէ ուստի պէտք է որ խօսքն ալ՝ որ շատ անգամ այլեւայլ նախա-

դատութիւններու (դատումներու) բաղադրութիւնն է, անոնց յարաբերութիւնը յայտնէ, և ասիկա շաղկապներու միջոցով կ'ըլլայ:

— Դատումները քանի՞ տեսակ են:

— Երկու, գլխաւոր եւ երկրորդական:

— Գլխաւոր դատումը ո՞րն է:

— Գլխաւոր դատումն ան է զոր միտքն իր մը կամ իրողութիւն մը իր տեսութեան առարկայ ըրած ատենը՝ նախ եւ առաջ կ'ընէ:

— Երկրորդական դատումն ո՞րն է:

— Երկրորդական դատում կ'ըսուին ան դատումները որ գլխաւորէն կ'հետեւին եւ անոր հետ յարաբերութիւն կամ կապակցութիւն մը ունին: Զորօրինակ՝ միտքը հետեւեալ դատումը կ'ընէ. Բոլոր մարդիկ երջանկութեան հասնիլ կ'ուզեն. ասիկա գլխաւոր դատում մ'է, բայց եւ այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կ'զսնուին: Ահա երկրորդական դատում մը որ առաջինին հետեւեցաւ, իբրեւ անոր հակադրեալը. բայց Շաղկապն աս հակադրութիւնը կ'բացատրէ:

— Գլխաւոր եւ երկրորդական դատումներու մէջ տեղ եղած յարաբերութիւնը կամ կապակցութիւնը քանի՞ տեսակ է:

— Երկու, Մասնական եւ Ընդհանուր:

— Ո՞րն է մասնաւոր յարաբերութիւնը:

— Մասնական կ'ըսուի դատումի յարաբերութիւնը երբ երկրորդական դատումը գլխաւոր դատումին մէջ գտնուած բառի մը յաւելուած է:

— Ընդհանուր յարաբերութիւնը ո՞րն է:

— Ընդհանուր կ'ըսուի դատման յարաբերութիւնը, երբ երկրորդական դատումը գլխաւորին ամբողջ իմաստին կ'վերաբերի. զորօրինակ, « Զնչրին (գունտուղ) որ իմացական կարողութեամբը շուկէն ու կապիկէն ստորին է, խօսողութեան գրեթէ հաւասար ձիւրք մը բնութենէն ընդունած է: Նոսր գրով նշանակուած դատումը մասնաւոր է:

« Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարստութիւն կ'փնտռեն. բայց եւ այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կ'զսնուին»: Հոս նոտր գրով նշանակուած դատումն ընդհանուր է:

— Խօսք մը որուն մէջ դատումներուն յարաբերութիւնն ընդհանուր է՝ ի՞նչ կ'կոչուի:

— Պարբերութիւն կ'կոչուի, եւ այն ատեն երկրորդական դատումները պարբերութեան անդամներ կ'ըսուին, եւ կրնան պարզ և բաղադրեալ ըլլալ. զորօրինակ՝ « Եթէ մեր տարուստեան վրայ մեզի գաղափար տուող բան մը կայ. — ասիկայ մեր ծննդեմէն ետք մեր զսնուած վիճակն է: Ահա պարզ պարբերութիւն մը: Մարդ ի-

րեն հետ համամիտ եւ համակիր եղողներուն հետ երկայն ասեմ գծեալ չի կրնար մնալ, վերջապէս կ'հաւատնի: — Բայց իրեն հակառակախոհ եւ հակակիր եղողներուն հետ սիրով եւ միաբանութեամբ ըլլալու վայրապար կ'աշխատի. — այսպիսիք կանուխ կամ անգամ իրարմէ կ'բաժնուին»: Ահա բաղադրեալ պարբերութիւն մը:

— Միտքն իր գաղափարը քանի՞ կերպով ընդհանուր յարաբերութեան մէջ կ'ըմբռնէ:

— Երեք կերպով. իբրեւ իրարմէ կախում ունեցող, իբրեւ իրարու հակադրեալ եւ իբրեւ իրարու պատճառ եւ գործ՝ կամ փաստ եւ հետեւութիւն:

«Մինչ Մենտր եւ Հագայոյ կ'իստեին, ոսկեգոյն եւ կապուսակ քեփերով ծածկուած դիփիններ տեսնէ»:

«Պատանի եմ, բայց գաղտնիքս չըսելու ունակութեան մէջ ծեւազած եմ»:

«Աստուած անսահման կատարեալ եւ անհուն բանն է. ապա, ո՛չ կրնայ խաբուիլ եւ ոչ ալ մեզ կ'խաբէ»:

Աս օրինակներէն առաջնայն մէջ գաղափարներու յարաբերութիւնը կախում է, երկրորդին մէջ՝ հակադրութիւն, երրորդին մէջ փաստ եւ հետեւութիւն:

— Քերականութիւնը, մանաւանդ ընդհանուրը, գիտութեանց ո՞ր տեսակին կ'վերաբերի, եւ անոր մէջոտն ի՞նչ է:

— Քերականութիւնը բարոյական կոչուած գիտութեանց առաջին կարգին կը վերաբերի եւ մէթոտը փորձառականն է, որ մտքին խորհելու օրէնքները գիտելով եւ բաժնելով յառաջ կ'երթայ:

— Մեթոտ ի՞նչ է:

— Մեթոտ կ'կոչուի ընդհանրապէս ճշմարտութիւնը փնտռելու կամ ապացուցանելու համար մտքին բռնած ճամբան:

ԱՐՄԷՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝ ԳԱԻԱՌԻՆ ՄԷՋ

(ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

(Շարունակութիւն 32րդ թիւէն)

Տըթ. Տաղաւարեանի Գիտական շարժումը մեր հրապարակին վրայ ունեցաւ իր մասնաւոր տեղը, որ բաց կը մնայ հիմա: Իբրեւ գոլտ-գիտական հանդէս՝ մենք միայն այդ թերթը ունեցած ենք: Դժբաղդաբար գիտութեան ճաշակն իսկ անժանօթ էր մեր մէջ, այն ատեն, ուստի այդ օգտաւէտ ամսագիրները՝ փոխանակ աւելի ճոխանալու՝ զուրկ մնաց հիմական գտնելիք գնահատումէն եւ քանի մը տարուան մէջ դադարեցաւ, փնտրող թերեւս: Տաղաւարեանի տնձը, սակայն, ամէն վստահութիւն կը ներշնչէր,

և իր Բարիզ մեկնումին ատենն իսկ՝ իր պատուաբեր վերադարձը ու գիտական շարք մը գործերու հրատարակութիւնը յուսալի էր ամէնուն։ Ի՛նչ որ հրապարակաւ յիշեցնել կ'ուզեմ այսօր, բազմաթիւ գիտասէրներու սրտէն ալ խօսած ըլլալով, գիտուն Տոքթէօռին երբեմնի խօստումն է, բաղձալի առաջադրութիւն մը, զոր ուխտս որակումով կը ներկայացնէր թէ՛ ժողովուրդին՝ հրապարակային հանդիսաւորութեամբ և թէ՛ մասնաւոր անհատներու, առանձին նամակներով ալ։ Մենք անհամբեր կը սպասենք որ այդ խոստումը կատարելու ձեռնարկէ, թարգմանութիւններէն աւելի լայն սահման մը տալով իր գիտական բեղմնաւոր գործունէութեան որ գիտութիւնը ժողովրդական դարձնելու գեղեցիկ սկզբունքին կը ձգտի։ Իր հին ջանքերը, որոնցմէ դառն փորձառութիւն մը պահած է թերեւս, հիմա անհամեմատօրէն աւելի արդիւնաւոր պիտի ըլլան, երբ նոր կորովով ու հմտութեամբ աւելի զարգացած՝ վերսկսի հրատարակել շատերուն ա՛յնքան սիրելի Գիտական Շարժումը, որուն համար կ'ուխտէր ինքը, — « Յորչափ ես շարժիմ. նա ալ պիտի շարժի »։

Դառնալով բուն նիւթին, պիտի եզրակացնէինք թէ՛ մամուլն իր բաժինը ունեցած է վերջապէս՝ գիտութիւնը ժողովուրդին ծանօթացնելու անհրաժեշտութեան ի նպաստ։ Թո՛ղ ըլլար ատի շատ մասնակի ու միակողմանի։ Ստոյգը սա է որ նոր սերունդը, եթէ հիւթեղ ընթերցումներու փափաքով փնտռաւորի ելնէր, 80ական եւ աւելի հիւս թուականներու հատորներովը գոհանալ պիտի ստիպուէր։ Ի՛նչ օգուտ խորհիլ թէ՛ մինչեւ այսօր ահագին ժամանակի մը գիտական յեղաշրջումներուն հանդիսատես եղած է աշխարհ, Քանի որ գաւառին համար է խօսքերնիս։ Վստահօրէն պիտի կրնայինք յայտնել թէ՛ խիստ քիչեր օտար գրականութեան մը սեմէն անցած են, ու հետեւաբար, հասնող սերունդը այդ հին թարգմանութեանց մէջ իր զարգացումը սահմանափակելու դատապարտուած է վերջնապէս։

Այսքան մը խօսելէ յետոյ, ինքնին չի՞ հասկցուիր թէ՛ շատ ազւոր պատասխան մը տալ դիւրին չպիտի ըլլար, երկրորդ հարցումին համար. — « Ի՞նչ կ'ընէ մամուլը՝ հիմա »։

Գիտական նորութիւնները գործ չունին, դժբաղդաբար, մեր օրաթերթերու եւ պարբերաթերթերու աչքառու առատութեան մէջ։ Լաւատեսութենէ աւելի, մարդ անորակելի միամտութենէ մը բռնուած ըլլալու էր, չլանալու համար գրական խափուսիկ երեւոյթներէն։ Օրաթերթները կը շատնան, կը ձեւափոխուին կը լայնան, ասդին նոր պարբերաթերթեր կը ծնին, սիւնակներու և էջերու յաւելումը մէկէն միւսին կը փոխանցուի, ձգենք խոստումներն ու ռեփլալի այլազան ձեւերը, հրապուրիչ երանգները։ Բոլոր ասոնցմով հանգերծ, ոչի՛նչ երեւան կուգայ զմեզ համոզելու թէ՛ գոնէ սա՛ քսան տարուան միջոցին քայլ մըն ալ մեր լրագրութեան բաժին ինչպիսի ըլլայ, գիտական տեսակէտով։

Հինին խոշորեկ հատորներուն հանդէպ. գոնէ չքմեղացնող նորութիւն մը չունինք. ցուցնելու համար՝ առանց կարժրելու սակայն։ Թողունք գրքերը, գիտական վէպերը մանաւանդ, որոնց պէտք ունի ամէն դասակարգ. — Կտոր-բրդուն պատառիկներն

ալ չա՛տ հազուագիւտ են լրագրական հրապարակի վրայ: Ծէծիդ-
եանի հմտալից յօդուածները, որոնք շահեկան կը դարձնեն
«Բիւրական»ը, երկու տարիներէ ի վեր, նոյնպէս Հանրագիտակի
գիտական բաժինը, կրնանք առաջ բերել, իբր թրքահայ մա-
մուլին արգարացումը: Ատիկա ինքզինքնիս խարել պիտի ըլլար
պարզապէս: Կը շեշտենք թէ ժողովուրդի զանազան դասակար-
գերը կրնան օգտուիլ անոնցմէ, եթէ ուզեն: Անոնք որ սանկ
տարրական նախակրթարանէ մը շրջանաւարտ ելած՝ սկեպտիկի
հովերով կը թրթռան, Բիւրակնի խմբագրականներէն մեծ օգուտ
պիտի քաղեն, հետեւելով գիտական ա՛յն համոզիչ ու լաւատես
ապացուցումներուն ու գեղեցիկ տեսութիւններուն՝ որոնց հեղի-
նակն իսկ, Բրօք. Ծէծիդեան, օրինակելի տիպարի մը յատկանի-
շերը կը միացնէ իր անձին վրայ, իբրեւ հմուտ գիտուն և ջերմ
կրօնասէր, զե՛րծ դերուս իմաստակներու: շաղփաղփուն խեղկա-
տակութիւններէն: Գիտական այդ պարբերական հատուածները,
այդպիսիներուն նկարագիրը պիտի վերաշինէ, մի եւ նոյն ատեն
թանկագին ծանօթութիւններ հայթայթելով իրենց գործօն կեան-
քին համար:

Մասնաւորապէս մեր վաճառականներէ անոնք որ լրագրէ կը
հասկնան — թուով խիստ քիչուոր, դժբաղդարար — ամէն կեր-
պով կրնան օգտուիլ Հանրագիտակի կից հրատարակուող Առաջնորդ
Վաճառականացէն, որ մինչեւ հիմա մեր մէջ հրատարակուած
տոմարագիտական բանաձեւուած դասագրքերէն անհամեմատ ա-
ռաւելութիւններ ունի: Իսկ Գիտական հօշորը, մանաւանդ Ժ. Շի-
րակացիի այդօրինակ կտորները, օգտակար են դպրոցական սե-
րունդին: Ու փափաքելի էր որ մեր մանուկներու այդ միակ թեր-
թը, միշտ ունենար իր գիտական թերթօններն անընդհատ, թարգ-
մանուելով յատկապէս գիտական կարեւոր վէպեր, որպէս էին
Ժիւլ-Վէրնի « Ուղեւորութիւն դէպի երկրիս կեդրոնը » և վեր-
ջերս հրատարակուած « Անդունդին մէջը » հիւթեղ շահեկանու-
թեան տեսակէտով՝ մանաւանդ վերջինը:

Ձենք մոռցած նաև Մասիսի գիտական պատառիկները. և մաս-
նաւորապէս կէս բժշկականները, որոնք բաւական ատենէ ի վեր
չեն երեւիր սակայն: Նոյնպէս հազուադէպ ցանցառութեամբ միւս
օրաթերթերուն ու պարբերականներուն մէջ հրատարակուած նը-
մանօրինակ կտորները, յաճախ ձեռնհասներու գրչէն ելած լուրջ
ու կարեւոր գրուածքներ, բայց երբեմն ալ՝ անկապ, և անխնամ
հատուկոտորներ, սարէն — ձորէն, որոնք ծրագրուած ուղղութենէ
մը զուրկ՝ շատ հեղ աոոր անոր քմահաճոյքին վիժումներն ըլլա-
լով՝ ապարդիւն կ'անցնին բոլորովին:

Ասոնցմէ դուրս, ի զուր պիտի փնտռէինք գիտական նոր
գրքեր. որոնք ստուար հատորներով լոյս կը տեսնէին: Բացի Տօք.
Տաղաւարեանի շարք մը հրատարակութիւններէն, Նաղիկեանի
քանի մը թարգմանութիւններէն, ուրիշ նշանակելի ոչինչ ունինք
իբրեւ ոչ-դասագիրք:

Ահաւասիկ մեր մամուլին գրեթէ բովանդակ արտադրութիւն-
թիւններուն մէջ՝ գիտական բաժինը: Պարզ ակնարկով մը նորը
հինին հետ կրնանք զուգակշռել, եւ պիտի տեսնենք թէ ներկային


նժարը շատ ճղճիմ, շատ թեթեւ կը մնայ անցեալին հետ բաղդատելով:

Ինչ որ կ'սպասէինք մեր մամուլէն, սո'սկ այսքան մը չպիտի ըլլար բնականօրէն: Նուազ վերացիկ ու թեթեւ եւ աւելի լուրջ ու հիւթաւոր արտադրութիւններ անհրաժեշտ են այլեւս: Գաւառացի քիչ շատ զարգացած դասակարգը՝ առօրեայ կամ պարբերական լրագրութենէն միայն կը սպասէ գիտական նորութեանց ծանօթացումը: Լրագրէ հասկցող վաճառականն եւ արհեստաւորն իսկ իր համեստ բաժինը կ'որոնէ՝ շաբաթէ շաբաթ հասնող ծրարներուն մէջ: Իսկ ժողովուրդի այն մասն որ կարգաւ գրել գիտէ, դիւրամբունելի եւ պարզ գիտական դասեր կը սպասէ իր կարգին, գեթ գիտակցելու համար կեանքի ամենէ տարրական երեւոյթներուն: Այս ըմբռնումին համեմատ, շատ գեղեցիկ շրջան մը բոլորեց երբեմնի օրաթերթ Մասիսը, ուր փոխանակ տեղ բռնելու ծառայող ճապաղ յօդուածներու՝ տնտեսական կեանքի շահեկան ուսումնասիրութիւններ ու ժողովրդական գիտական դասեր անպակաս էին: Այն ատենի խմբագրապետն, Գ. Անդրէասեան, յետոյ Հիքսլէյի «Ժողովրդ. Գիտական դասերն» ալ թարգմանելու ձեռնարկեց. գնահատելի աշխատութիւն, որուն առաջին հատորը միայն հրատարակուեցաւ սակայն:

Անոնք որ միշտ երեմիական մը ունին իրենց լեզուին ծայրը, գրական հրապարակի ամլութիւնը ողբալու նորոյթին յատկացուած երբեք՝ նկատի առած են թէ՛ ամբողջ լրագրութիւնը, տասնեակ պարբերաթերթերէն սկսելով մինչեւ չորս հինգ օրաթերթերը, սո'սկ ատոր նուիրուած են, ահագին առատութեամբ թարգմանածոյ նորավէպեր թիմելով ու տեղ տալով բոլոր այն բռնազբօսիկ բանաստեղծութիւններուն՝ ուր չեմ գիտեր քանի՛ հարիւրերորդ անգամը լինելով կը նկարագրուին կապոյտ երկինքին ու կանաչ ծովերուն հմայիչ տեսարանները...

(Շար.)

Լ. ՍՐԱՊԵԱՆ



Մանկապարտեզի հանդեսներուն, որոնք այնքան առասուրբամբ յաջողեցին իրարու Պոլսոյ ու Արուսեաններու մէջ, ամենէն շատ յաջողութիւն ստացողներէն մէկն ալ Պէթիկբաշի Ս. Մաքրուհեան վարժարանինն էր, ուր պնդիկները ներկայացուցին սիրուն բարեբաւութիւնը զոր կը ներկայացնենք մեր ընթերցողներուն:

ՏՐԿԻՆԻՆ ՍՊԱՍՈՒԼԻՆ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՔ

Տիկին Հռիփսիմե	
Սաքենիկ	Իր Քեռորդին
Արաֆսի	» »
Շուշան	Տիկ. Հռիփսիմեի սպասուհին
Ասրիկե	Տիկ. Հռիփսիմեի պզտիկ բարեկամուհին
Յակոբ	Հանդերձավաճառ
Արեալոյս	Տիկ. Հռիփսիմեի մտերիմ բարեկամուհին
Հրաչեայ	Տիկին Արշալոյսի պզտիկ տղան, 5 տարեկան
Գառնիկ	Պարսիզպանին եղբայրը

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Տեսարանը կը ներկայացնէ գեղջուկ կերպով կահաւորուած սրահ մը

Ա. ՏԵՍԱՐԱՆ

ԱՐԱՔՍԻ, ՍԱԹԵՆԻԿ, ՇՈՒՇԱՆ (Արաքսի եւ Սաթենիկ բեմին եզերքը յառաջանալով երեք բարովի նշանէր կ'ընեն. Շուշան կարգի կանոնի կը դնէ աթոռները, սեղանը, եւայլն):

Արաֆսի. — Երթաք բարով, սիրելի մօրեղբայր:

Սաքենիկ. — Շուտ վերադարձէք, բարի մօրեղբայրս:

Արաֆս. — Ուշադրութիւն ըրէք ձեր առողջութեան:

Սաք. — Մեզի գրելու մի մոռնաք, մօրեղբայր, կ'աղաչեմ:

Արաֆս. — Միշտ գրեցէք:

Սաք. — Շաբաթը երեք անգամ գրեցէք:

Արաֆս. — Այլ ամէն օր:

Սաք. (Պօռալով). — Խաչի՛կ, ուշադրութիւն ըրէ որ մօրեղբայրս չհիւանդանայ:

Արաֆս. — Գրի՛գոր, բալթօն աղէկ մը կոճկէ, շատ ցուրտ է, կրնայ ըլլալ որ պաղ առնէ:

Սար. — Երթաք բարով, բարի մօրեղբայրս:

Արախ. — Ի՞նչ պատկառելի գլուխ մը ունի. այնպէս չէ՞, Շուշան, ճերմակ մազերով:

Շուշան (Աւելին կոթնելով). — Խե՞նթ է, ինչ է, այս տարիքին ելլել երթալ աշխարհքին անդիլի ծայրը. Կ'աղաչեմ ըսէք, ի՞նչ օգուտ կ'ընայ ունենալ ատկէ Կարծես թէ հոն, վառարանին քովիկը, տաքուկ սենեակին մէջ հանգիստ չափտի ընէր:

Արախ. — Միտքը դրած է որ անպատճառ ճամբորդութիւն մ'ընէ:

Շուշան. — Է՛հ ուրեմն, թող ճանկերդէ յօղացաւը երեւան պիտի ելլէ. քեզ պիտի տեսնէք թէ՛ այն տեսակ վիճակի մը մէջ պիտի վերադառնայ որ գինքը այլ եւն անկիւրելի պիտի ըլլայ ճանչնալ:

Սար. — Բեկի ինչ կ'ըլլայ, մօրեղբայրս եթէ ճամբորդէ:

Շուշ. — Ոչի՛նչ, միայն թէ ամբողջ տունը տխրութեան մէջ պիտի ըլլայ, եւ յետոյ, որչա՛փ կ'ուզէի զինքը միշտ հոս տեսնել, ա՛խ, այն բարի մարդուկը. լսել ձայնը, քիթին տակէն մոռնալը, պօռալը, հազալը, թքելը. (նկատելով մօրեղբոր ձայնին). Շուշան, տա կեղծ պնդանքդ բեր. (ի՛ր ձայնով) ահաւասիկ, պարոն, ահաւասիկ: (Դարձեալ անոր ձայնով) Շուշան, — Ի՞նչ է ան, պարոն. — Թաշկիմա՛հս. — Ահաւասիկ, պարոն, ահաւասիկ. — Շուշան. — Հրամանեցէ՛ք, պարոն. — Քիթախտիս տուփը. — Ահաւասիկ, պարոն, ահաւասիկ. — Շուշան, Շուշան, Շուշան, անտունընէ՛ մինչեւ իրիկունք Շուշան, կ'երթայի, կուգայի, կը վագէի, երբեմն անջ, երբեմն ձախ:

Արախ. — Ասո՞նք են պատճառները որոնք ծանր կուգան քեզի:

Շուշ. — Անտարակոյս. և յետոյ չէ՞ք տեսներ որ Խաչիկն ու Գրեգորն այ հետը կը տանի. հոս մենք միմեկ մնացինք. ա՛հ, չիտակը, սիրտերնիս շատ պիտի նեղանայ:

Սար. — Խեղճ Շուշանս, որչա՛փ խնդացնել կուտան վրադ:

Շուշ. — Լա՛ւ, օգուտ քաղեցէք ուրեմն իր բացակայութենէն բայց հիմակունէն կը գուշակեմ թէ ճերմակալը երկար չափտի տեւէ: (Տիկին Հոփսիսմէ կը մտնէ):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

ՆՈՅՔ ԵՒ ՏԻԿԻՆ ՀՈՒՓՍԻՄԷ

Տիկ. Հո. (Շուշանին). — Ի՞նչ կ'ընես հրս, անխելք:

Շուշ. — Աթոռները կը շտկեմ:

Տիկ. Հո. — Կը շտկե՛ս... այսինքն գլխէ կը հանես իմ քեռորդիներս քու պարապ խօսքերովդ, գիտեմ, քովի սենեակէն ամբողջ լսեցի:

Շուշ. — Եթէ պատերն ականջ ունին, յանցանքը իմս չէ անշուշտ:

Տիկ. Հո. — Ի՞նչ ըսել է ադ, անխելք, դեռ պատասխա՞ն ալ կուտաս: Շո՛ւտ դուրս ել, բայց ո՛չ, կեցիր: Սա աթոռներուն նայէ մէյ մը, մատ մը փոշի կայ վրանին, մաքրէ՛ սըղոնք. (Շուշան բարկութեամբ կ'առնէ սրբիչ մը), (Արաֆսիին եւ Սաքիինին) Աղջիկներս, եթէ ասանկ երթայ, կը տեսնեմ թէ երբեք չպիտի օգտուիք ձեր պարոն մօրեղբօր բացակայութենէն:

Արաֆս. — Բայց մօրաքոյր, մենք բան մը չենք ըներ:

Տիկ. Հո. — Ձաւակներս, ես կը յուսամ թէ ձեզմէ գոհ պիտի մնամ եւ դժգոհութեան պատճառ մը չպիտի տաք ինծի:

Սաք. — Մօրաքոյր, շատ գոհ պիտի ըլլաք մեզմէ:

Տիկ. Հո. — Փառք քեզ Աստուած. (Շուշանին ու մօիկ կ'ընէ) Ի՞նչ կ'ընես հոգ բերանդ բաց:

Շուշ. — Ե՞ս, բերանս կը բանամ որ աւելի դիւրին չունչ առնեմ:

Տիկ. Հո. — Չէ նէ մի ականջներդ կը բանաս որ մեզի մըտիկ ընես: Տե՛ս սա սեղանը, վրան լեցուն փոշի է. աս ի՞նչ աղտոտութիւն է:

Շուշ. — Ես փոշիին չըսի որ գայ հոգ նստի:

Տիկ. Հո. — Ինծի նայէ, այդ անհարկի պատասխաններովդ անտանելի կը դառնաս կոր, գիտե՞ս:

Շուշ. (կամաց). — Անհարկի պատասխաններս հէ՛... բայց բայց եթէ պատասխան տալու չըլլամ, այն ատեն ալ համր է պիտի ըսէ:

Տիկ. Հո. — Շուշա՛ն, Շուշա՛ն:

Շուշ. — Ի՞նչ է տիկին:

Տիկ. Հո. — Բայց իրաւ որ զիս կը բարկացնես:

Արաֆս. (Յաճ ձայնով). — Շուշա՛ն, ատանկ մի պատասխաներ մօրաքոյրին:

Տիկ. Հո. — Իրաւ որ աս աղջիկը խելքս գլխէս պիտի թռցընէ:

Շուշ. (Քովընցի դառնալով կամաց մը). — Արդէն ունի՞ որ: (Ասիին կուգայ):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

ՆՈՅՔ ԵՒ ԱՏՐԻՆԷ

Ատ. — Բարեւ ձեզ, ինչպէ՞ս էք, օրիորդներ, եւ դուք տիկին Հռիփսիմէ, ի՞նչպէս էք, շատ նիհարցած կը տեսնեմ ձեզ:

Տիկ. Հո. — Ճմարիտ էք, աղջիկս, իրաւունք ունիք, ալ սա Շուշանին ձեռքէն քաշածներս Աստուած միայն գիտէ... ալ դիմանալիք բան չէ աս:

Ասր. — Հա՛, աղէկ միտքս եկաւ, տիկին, լսեցի թէ սպասուհիի մը պէտք ունիք եղեր, իրաւ որ գէշ չէք ըներ եթէ չընորհքով սպասուհի մը առնէք, որովհետեւ, վերջապէս այս տեսակ տունի մըն ալ չնորհքով սպասուհի մը կը վայլէ եւ գիտէ՞ք թէ ի՞նչ ազդեցութիւն կ'ընէ եկող դացողներուն վրայ:

Տիկ. Հո. — Ի՞նչպէս, արդեօք սպասուհի՞ մը ունիք յանձնարարելի:

Ասր. — Այո՛, տիկին, պարկեշտ պղտիկ սպասուհի մը շատ չնորհքով որ կապիկի մը չափ խելացի է եւ սա սեղանին ոտքին չափ բարձր: Իր մայրը արդէն հօրեղբայրներէս մէկուն սպասուհին է. շատ աղաչեց որ աղջկանը տեղ մը գտնեմ. կը վստահացընեմ ձեզ թէ շատ պիտի սիրէք զինքը:

Շուշ. (բարկանալով) — Տիկինը սպասուհիի պէտք չունի:

Տիկ. Հո. — Դուն ի՞նչ խօսքի կը խառնուիս, անկի՛րթ: Ընդհակառակն, աղջիկս, արդէն միտքս դրեր էի որ եթէ յարմար մէկը գտնեմ, սառնկ պղտիկ ամսականով մը քովս առնեմ, որովհետեւ ամուսինս որ պղտիկ ճամբորդութեան մը համար մեկնեցաւ եւ ինչ որ ըրինք չկրցաւ ետ կենալ իր այդ նպատակէն, իրեն հետ տարաւ Խաչիկն ու Գրիգորը եւ ինծի հիմա առանց սպասուորի թողուց:

Շուշ. — Ե՞ս ինչ եմ եղեր:

Տիկ. Հո. — Դուն լւէ՛, անշնորհք, քեզի հետ խօսող չկայ: Ի՞նչ պիտի ըսէի... խօսքս ալ մոռցայ... սա անխելքն ալ հանդարտ չի թողուր որ տեղն ի տեղօք պատմեմ... (մտածելու ձեւ կ'ընէ) հա՛, կ'ըսէի թէ... է՛հ, վերջապէս, կ'առնեմ քովս ձեր այդ յանձնարարած սպասուհին: Խելացի է, այնպէս չէ՞, ձեռքէն բան կուգայ, հէ՞. ուրիշին քով ծառայութիւն ըրա՞մ է:

Ասր. — Անտարակոյս, տիկին Հռիփսիմէ:

Տիկ. Հո. — Լաւ ուրեմն, ո՞ւր տեղացի է այդ սպասուհին:

Ասր. — Պարտիզակցի:

Տիկ. Հո. — Քանի՞ տարեկան է:

Ասր. — Շիտակը ճիշդ չեմ գիտեր, երթամ զրկեմ:

Տիկ. Հո. — Ո՛հ, ոչ, անօգուտ է: Նախ պէտք է որ տեղեկութիւն առնեմ անոր վրայօք: Շուշանը կ'երթայ:

Շուշ. — Ե՞ս, Աստուած չընէ, ես չեմ երթար:

Սար. — Մօրաքոյրս ինչ որ կ'ըսէ ան պիտի ընես:

Արաք. (Շուշանին) — Քոյրս իրաւունք ունի:

Տիկ. Հո. (Զորս դիմ նայելով). — Բայց իրաւ կ'ըսեմ թէ շատ երես առեր է աս. պիտի երթա՛ս, կը լսե՞ս, չէ՛նէ... (Շուրան ուսերը կը բոթուէ) պիտի երթաս կ'ըսեմ կը քեզի, ապա թէ ոչ կը տեսնես դուն:

— Շուշ. (Միտք փոխելով). — Այո՛, կ'երթամ. այո՛, պիտի երթամ. արդէն իմ տագնաւս ալ արեւ է:

Տիկ. Հո. — Ես ինչ որ ըսեմ ան պիտի ընես: (Ասրինեից). դուք ալ լսեցիք ես՝...

Ասր. — Մի՛ բարկանաք, տիկին, մի՛ բարկանաք. ոգրեմն որոշուած է ա. (Շուրանից) Սամաթիա, խուլումճի Ահարոն աղային տունը, պիտի հարցունես, ավէկ մարդ կը ճանչնայ հոն. Ահարոն աղան:

Տիկ. Հո. — Սպառուհիին սնունդ ի՞նչ է, օրիորդ:

Ասր. — Վարեանէ է աղիկին, եւ ներեցէք որ ամենախորին յարգանքներու մատուցանելով ձեզ, մեկնիմ: (Կը մեկնի):

Տիկ. Հո. (Ինքնիւրեմ). — Այո՛, իրաւունք ունի Ատրինէն. այս սպասուհին չաւ ազդեցութիւն պիտի ընէ եւ ազէկ պիտի վայլէ այս տունին մէջ: Ի՛նչ փողոց ըսաւ. ա՛հ, մոռցայ, շուտ մըն ալ միտքես կ'ելլէ: (Կը վազէ Ասրինեից ետեւէն գայն գտնելու):

(Շարունակելի)



ՍԱՌՆԱՐԱՆԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Ածուրթ Շրջմանի խորհրդաւոր անհետացումը մեծ յուզում պատճառեց Կրիստոսօլաի մէջ, յարդրամատէրը ծանօթ էր իր սրտոտութեամբն ու հարստութեամբն: Կրքն-Մուանի պահգոկին մէջ՝ ուր ան կուգար, երեք տարիէ ի վեր Յուլիս ամիսը անցնել, Պրն. Շրջ կրճատեալ անունը կուտային փրեն, Երկու Շէյտէքներու միջեւ տարածուած բնակիչներուն շաւտերը կը հաւաստէին թէ ոճիր մը տեղի ունեցած է. ոմանք ալ տակաւին կ'ուզէին հաւատալ պարզ արկածի մը:

Ասոր համար 1809 Օգոստոս 2ի հարցաքննութեան օրը, բազմութիւնը խառնուած էր. հասարակապետական չէնքին դիմացը հրապարակին վրայ Առաջնորդներու ընկերակցութեան ներկայացուցիչները եկան և կարգաւ դատաւարանի սրահին մէջ շարուած նստարաններուն վրայ բազմիլ. այս երիտասարդ ու քաջարի մարդոց դէմքին հանդարտ երեւոյթին հակառակ՝ կարելի

էր գուշակել անոնց ներքին յուզումը՝ գլխարկներն մատներնուհ
մէջ դարձնելու շարժումէն :

Երբ դատաւորը անուանակոչումը կատարելով հաստատեց թէ
խումբը ամբողջ է, խօսքը դիւան տակը կեցող գունատ ու մտա-
տանջ մէկու մը ուղղելով կանչեց զայն : « Իւլրիս Թակմար , Ը-
սաւ դատաւորը , ի՞նչ է ձեր խոստովանութիւնը » : Այս հրաւերը
ընդունողը տատանուն քայլերով առաջ եկաւ և սեղանին կրթնե-
լով սկսաւ խօսիլ , մինչ ատենադպիրը կը գրէր :

— Երեքշաբթի առտու ժամը 5ին ճամբայ ելանք : Մտքեր-
նիս՝ գիշերը Շվարձէկի ժայռին վրայ անցնելով յաջորդ օրը
Սարսափի գագաթը բարձրանալ էր : . . . Չէի յուսար թէ մինչև
հոն կրնանք հասնիլ , բայց չկրցայ մերժել անձնասիրութեան
պատճառաւ , մանաւանդ որ Պրն . Շըչ . . . (խօսքը շտկելով) Պրն .
Շըչման յիսուն թաւեր խոստացեր էր՝ յաջողէինք թէ ոչ : . . .
Երեք ժամէն Ստորին Սառնարանէն մագլցեցինք ո՛չ շատ դժուա-
րութեամբ , ընկերս խիստ զուարթ՝ անգամ մը ըսաւ , « Իւլրիս ,
կարծեմ շատ յոգնութիւն չպիտի կրենք » , « Կրնա՛յ ըլլալ , պա-
րոն Շըչ » պատասխանեցի . սկսաւ խնդալ անունը այդպէս ար .
տասանած ըլլալու : Յետոյ ա՛լ չխօսեցաւ , որովհետեւ վերելքը
երթալով կը դժուարանար : Երբ Չազէնպէրկէ անցանք , դիտեցի
որ Պրն . Շըչման իմ բացած ճամբէս չեղած էր . . . առջեւէն
քալելով նախ չէի նշմարած . . . « Հոգ տեղուանք մի՛ երթաք .
ինծի հետեւեցէք » , Աւելի հեռացաւ ինէ պատասխանելով . « Թո՛ղ
սա կարմիր ձիւնի վարդէզարդ դիտեմ » , ճիշդ այս պահուն է որ
դժբաղդութիւնը պատահեցաւ » :

Հոս պատմիչը կանգ առաւ , գոց ըրած կտոր մը ըսելու պէս
խօսած էր . ձայնը՝ որ առաջները կը դողդղար , բոլորովին
կտրեցաւ :

« Շարունակեցէք » ըսաւ դատաւորը խիստ ու հրամայող չեղ-
տով մը : Իւլրիս Թակմար ձեռքը քրտնաթոր ճակտին տարաւ ,
ու գերազոյն ճիգով մը շարունակեց : « Անշուշտ սառէ կամուրջ
մը կար . . . ճարճարիւն մի լսեցի , յետոյ յիշոց մը . . . ու միս-
մինակ մնացեր էի » :

Դատաւորը հարցուց , « Ուրեմն չուանով մը կապուած չէի՞ք
Պր . Շըչմանի : Ասանկ անխոհեմութիւն մը ինչպէ՞ս ըրիք , դո՛ւք
որ փորձառու էք » :

Թակմար ձայն չհանեց նախ , յետոյ պատասխանեց . « Ինք էր
որ չուզեց » , Սուր բացագանչութիւն մը լսուեցաւ առաջնորդնե-
րու սեղանին կողմէն : Թակմար , բոլորովին շփոթած անոնց
դարձաւ . « Տեսնե՛նք , դո՛ւք ալ աղէկ գիտէիք թէ ինչպէս կ'ըլ-

լայ... Երբ շուանի ձեռքս Պրն. Շրչմանի մոտեցայ, սանկ անդին հրեց ինծի (արմուկի հարուած մը կ'ընէ) ու ըսաւ «խենդ բաներով գլուխ մի ցաւցներ»: Ի՞նչ կրնայի ընել... միթէ առաջնորդ մը գերի չէ՞...»:

Մերժումի ձեւեր ու բացազանչութիւններ բողոքեցին այս բառերուն դէմ. «Թակմար, ըսաւ դատաւորը, ամէն արդարադատ անձ պիտի կրէ նոյն ազդեցութիւնը զոր խօսքերդ ըրին ընկերներուդ վրայ: Ընդունելով թէ խոստովանութիւնդ ճիշտ է, կարելի չէ արդարացնել քու ընթացքդ: Հիմա ըսէ՛ թէ դիպումս ծէն ետքը ի՞նչ ըրիր»:

Իւլրիխ պահ մը յիշողութիւնը ժողուել ուզեց, յետոյ ըսաւ. «Բան մը չեմ յիշեր» և յուսահատ հառաչ մը արձակեց: Բայց ետեւէն կծու փսփսուքներ լսելով եւ դատաւորին խուզիչ ու անաչառ ակնարկին տակ ինքզինքը ժողուեց, «Ահա՛... ըսաւ: Բացուած ճեղքին եզերքը վաղեցի... գլուխս մէջը կախեցի... մութ ու պաղ էր... Ջրաղացի խժրտուքի պէս ալմուկ մը կար... հազար անգամ պօռացի «Պրն. Շրչման... Պրն. Շրչման...» կ'իմանայի ձայնիս դէպ ի վար երթալը, բայց պատասխան մը վեր չէր գար...»

— Որչա՞փ ժամանակ այդ վիճակին մէջ մնացիր:

— Չեմ գիտեր:

— Ամէն պարագայի մէջ երկու օր ետքն է որ մարդու երեւցաք. ինչո՞ւ համար աւելի փութկոտ չգտնուեցաք արդարութեան իմաց տալու:

Հոս Իւլրիխի ձայնը կարծես կը խեղդուէր անձկութենէն:

— Ամթ կ'զգայի... կը վախնայի որ զիս կը տեսնեն...: Խորհեցէ՛ք թէ ի՞նչ է առաջնորդ մը որ առանց իր ճամբորդին կը վերադառնայ:»

Այս անգամ ընկերները հաւնեցան խօսուածքին. իրա՛ւ սոսկալի կացութիւն մըն էր այդ ուր գտնուած էին իրենցմէ մէկ քանին ալ:

— Առջի օր, շարունակեց դատաւորը, չորս առաջնորդներ, ձեր յայտարարութիւնը ճշդելու համար, ձեզի հետ մէկտեղ արկածին վայրը գացին: Ինչո՞ւ համար ճիշտ տեղը չկրցաք ցոյց տալ: Ասի տարօրինակ բան է, այնպէս չէ՞:

— Անկէ ի վեր շատ ձիւն եկած էր... ճեղքուածքներուն մէջտեղ չկրցայ ճամբաս գտնել, թոթովեց Իւլրիխ:

— Թակմար, ըսաւ դատաւորը ոտք ելլելով, դո՛ւն ամբաստանուած ես դրամատէրը կողոպտելու համար զայն սպաննելու և դիակը անդունդի մը մէջ նետած ըլլալու ոճիրովը:

Ամբաստանեալը բոլորովին գունատեցաւ և ինքզինքը վստահ
ցուցնելու համար ուսերը թոթուեց :

— Պրն. Շըչման, շարունակեց դատաւորը, միշտ խոշոր գու-
մար մը կը պահէր դրամապանակին մէջ : Շատ անգամներ գիւղիս
բնակիչները դիտած են լեցունկեկ քրակ մը բանալը, դո՛ւք ալ
գիտէիք ասիկա, ուստի գործը այնպէս մը կարգադրեցիք որ մի-
նակնիդ անոր հետ մեկնիք . . .

— Բայց բնաւ չարգիլեցի զինքը երրորդ ընկեր մըն ալ առ-
նելէ, գոչեց առաջնորդը անճարակութեամբ :

— Բացէ ի բաց սուտ կը հանեմ այդ խօսքդ, Հիմա պիտի
կարդամ Կրան-Մուանի պանդոկապանին գրաւոր վկայութիւնը :

«Յուլիս 25ին, Պրն. Շըչ յայտնեց որ յաջորդ օրը ճամբայ
պիտի ելլէ Սարսափի գագաթը ելլելու համար : Շատ պրազած
էր, հարցուց թէ Իւլրիս Թակմար վստահելի՞ մարդ էր : Խորհուրդ
տուի որ մէկ երկու առաջնորդ եւս առնէ հետը, որովհետեւ վե-
րելքը շատ վտանգաւոր էր : Պահ մը վարանելէ ետքը Պ. Շըչ
որոշումը տուաւ. «Բա՛հ, ըսաւ, Թակմար պիտի նեղանայ, ինէ
խնդրեց որ ուրիշ ընկեր չառնենք հետերնիս» : Ահա՛ իմ բոլոր
գիտցածս այդ խնդրին վրայ, զոր կը հաստատեմ հանդարտ խիղ-
ճով : Մէօրն՝ պանդոկապետ Կրան-Մուանի» :

— Ասոր ի՞նչ ունիք ըսելիք :

Թակմար անէացած էր, ժամանակ առ ժամանակ շունչը կո-
կորդէն կը փախչէր կովի մը փչումին պէս :

— Կ'ուզէի . . . թոթովեց, եթէ յաջողինք . . . առաջին ա-
ռաջնորդը ըլլալ . . . Սարսափի գագաթը հասնող :

— Վերջապէս ձեր փափաքին համեմատ, երկուքնիդ միայն
մեկնեցաք : Ընդունելով ձեր յայտարարութիւնը, արկածը երեք-
չարթի պատահեցաւ, առտուան ժամը 10էն տասնըմէկի մէջ-
տեղները, և դուք հինգչարթի օրը միայն իրիկուան դէմ Կրին-
տէլուօրտի ոստիկանութեան ներկայացաք, աղէտին վրայ անանկ
անկապակից ծանօթութիւններ տալով որ ձեզի ոճիր մը վերագ-
րելէ առաջ խենդի տեղ գրին : Հիմա՛ ուշադրութիւն ըրէք : Ձեր
մեկնումին նախորդ օրը ինէ խնդրեցիք որ չքաւորութիւննիդ
յայտնող վկայական մը տամ նպաստ մը ընդունելու համար : Ըսել
է Թակմար, բնաւ ստակ չունէիք, Կառավարութեան պաշտօն-
եաները ձեր խրճիթին մէջ խուղարկութիւն մը կատարեցին, ահա
տեղեկագիրը. «Անտառապահ ու դաշտապահ ոստիկաններու ըն-
կերակցութեամբ Իւլրիս Թակմարի բնակարանը խուղարկելու
դասի : Խրճիթին բոլոր կողմերը պրպտեցի առանց բան մը
գտնելու, ի վերջոյ նշմարեցինք որ վառարանին քովը՝ գետինը

նոր փորուած է . հողը ասդին առնելով աասներկու ոսկի գտանք
թաղուած : Ի հաստատութիւն որոյ կ'ստորագրենք...», Թափ-
մա՛ր , ըսէ՛ մեզի , ուրկէ գտար այսչափ գրամը ,

Առաջնորդներու խումբէն զայրոյթի երկար աղաղակ մը լըս-
ուեցաւ . Դատաւորը նորէն կրնեց հարցումը :

— Ստորին Սառնարանին ճամբուն վրայ կը բնակիմ , ըսաւ
Թափմար մեծ ճիգ մը ընելով խօսելու համար , կացինս առնելու
համար ներս մտայ . Պ. Շըջման չքաւորութիւնս տեսնելով ափ մը
ոսկի տուաւ կնոջս որ անմիջապէս թաղեց , որովհետեւ տունե-
րիս կղպանք չունի և մենք ալ միշտ դուրս կ'ելլենք :

Դատաւորը տեսնելով որ ուրիշ խոստովանութիւն մը կարելի
չէ խլել անկէ , մօտակայ սենեակ մը առաջնորդել տուաւ ամ-
բաստանեալը :

(Շար.)

ԲՕԼ ՀԵՐՎԻՏՕ

ԳՐԱԳԻՏԸ

Մարդ , փոխանակ նախանձելու գրագէտին , թո՛ղ արգահա-
տի անոր վրայ , քանզի ահա այն պարագաներն , որոնցմով կը
տարբերի ան իր նմաններէն :

Գոյութիւն չունի անոր մէջ նոյն իսկ ամենապարզ զգացում
մը : Զննութեան առարկայ կը դառնան վայելած բոլոր ուրախու-
թիւններն ու հաճոյքները եւ կրած վշտերն ու յուսահատութիւն-
ները : Հակառակ բոլորին եւ ակամայ , առանց գիտաւորութեան
կը վերլուծէ սրտերը , դէմքերը , անձերն ու ելեւէջները , Լյն
ինչ բան մը կը տեսնէ , զոր թերեւս նախապէս ալ տեսած էր ,
ինչո՞ւ հարցումը կ'ուղղէ անոր : Զունի համարձակ թռիչք մը ,
ճիչ մը և համբոյր մը և ո՛չ ալ այն վայրկեանական գործողու-
թիւններէն մին , զոր ոմանք կը կատարեն հարկէն ստիպուած ,
սակայն առանց գիտնալու , առանց մտածելու , առանց հասկնա-
լու և ի վերջոյ առանց հաշիւ տալու :

Տառապած ժամանակ կը ծանօթագրէ իր վիշտերը եւ կը
դասաւորէ զանոնք յիշատակարանին մէջ , Գերեզմանէն վերա-
դառնալէն յետոյ , ուր թողուցած է իր աշխարհի մէջ ամէնէն սի-
ւելի էակը . կըսէ ինքնիրեն « եզական է զգացածս . տառապան-
քի գինովութիւն մ'էր այս , ևլն » : Եւ այնուհետեւ մէկիկ մէկիկ
կը մտաբերէ բոլոր մանրամասնութիւնները . դրացիներու կեց-
ուածքները , արուեստակեալ ձեւերը , սուտ ողբերը , կեղծ դէմ-
քերը եւ հազարաւոր փոքրիկ ու աննշան բաները , արուեստա-
կան զննութիւնները , տղու մը ձեռքէն բռնող պառաւի մը
քրիստոնէութեան ցոյցը , պատուհանի մէջի լուսոյ ճառագայթը ,
կառախումբի մէջտեղէն անցնող շունը , գերեզմանի հսկայ կար-
մրածաւերու ներքեւ յուղարկաւորութեան կառքի ներգործած

ազդեցութիւնը, դիակիրներու գլուխը եւ դիմագծերու հակասութիւնը, դաճաղը փոսն իջեցնող չորս մարդոց ջանքը եւ վերջապէս հազարաւոր բաներ, զորս չպիտի կրնար նշանակել նոյն իսկ այնպիսի քաջ մարդ մը, որ կը տանջուէր իր բոլոր հոգեովը, բոլոր սրտովը եւ իր բոլոր զօրութեամբը:

Ամէն բանէ առաջ գրագէտ մը եղած ըլլալուն համար դիտած է ամէն ինչ, ըմբռնած եւ ծանօթագրած զանոնք, եւ այնպիսի կազմութեամբ միտք մը ունի, որ անոր քով ցոլացումը, ինչպէս կ'ըսեն աւելի բնական ու աւելի վառվռուն է քան թէ առաջին մտաւոր ցնցումը եւ արձագանգը՝ աւելի հնչուն քան թէ նախնական ձայնը:

Կարծես թէ երկու հոգի ունի. որոնցմէ մին կը ծանօթագրէ, կը բացատրէ, գերբնական հոգիով մը կը մեկնէ իր դրացուհւոյն իւրաքանչիւր զգայութիւնը, ընդհանուր է ամէն մարդու, ուրիշներու եւ նոյն իսկ իրեն ցոյքը ըլլալու դատապարտուած է յաւիտենապէս եւ ամէն պարագայի մէջ, դատապարտուած է ինքըզինք քննելու, զգալու, յուզելու, սիրելու, մտածելու, տառապելու եւ երբեք չնեղուելու, չխորհելու, չսիրելու, չյուզուելու ճիշդ այնպէս՝ ինչպէս կ'ընեն ոմանք միամտօրէն, անկեղծութեամբ, պարզութեամբ առանց իրենքզիրենք վերլուծելու իւրաքանչիւր հաճոյքէ եւ կամ հաւաքանքէ յետոյ:

Չարածճի կը թուի անոր ըսածը, երբ կը խօսի, մի միայն անոր համար, յստակատես է իր խորհողութիւնը եւ կը յօդատէ բոլոր այն գապանակներ որոնք ծածկուած կը մնան ուրիշի զգացումներով եւ գործողութիւններով:

Երբ կը գրէ, չի կրնար հրաժարիլ գրքի վրայ նետելէ բոլոր այն բաները, զորս տեսած, հասկցած եւ ճանչցած է, առանց բացառութեան, նոյն իսկ լինին անոնք ազգականներու եւ բարեկամներու նկատմամբ, անգույշ անկողմնակալութեամբ մը և արդիւնքը խոշորցնելու համար նոյն իսկ չափազանցութեամբ մը կը մերկացնէ սրտերն բոլոր անոնց, զորս կը սիրէ եւ կամ սիրած էր եւ սակայն ամէն բանէ վեր կը զբաղի նա աւելի իր գործերով եւ երբեք իր սիրած անհատներով:

Եւ երբ կը սիրէ նա, այն ալ կին մը, կ'անդամահերձէ զայն հիւանդանոցի մէջ գտնուող դիակի մը նման: Իր քով կրած քրննութեան զգայուն կշիռքի մէջ կը կշռէ վայրկենապէս անոր լսածները ու տեսածները եւ կը դասաւորէ զանոնք իրենց յիշատակարանական արժէքին համեմատ: Երբ նէ անխորհուրդ եռանդով մը կը նետուի անոր վիզը, այն ատեն գրագէտը պիտի դատէ այդ շարժումը իր յարմարութեան, պատշաճութեան եւ եղերեքական ազդեցութեան համեմատութեամբ եւ եթէ գէշ կատարուած կամ անյարմար զգայ լռելիայն պիտի դատապարտէ զայն:

Նա դերասան ու հանգիսատես է միանգամայն ո՛չ միայն ուրիշներու այլեւ նոյն իսկ իրեն համար. միայն գործող մը չէ երբեք այնպէս՝ ինչպէս կ'ապրին միամիտ մարդիկ առանց չարասիրութեան: Սրտերը, գործողութիւններն ու ծածուկ նպատակները կը մերկանան իրենց գաղտնիքներէն, երբ կը գտնուին գրագէտի

Անձրեւած օր մը առանձինն կ'երթայի հերկուած նորմանտեան դաշտերու և պարարտ գարիի ընդարձակ արտերու մէջէն, որոնք դողդղալով կը սպրդէին ոտքերուս տակէն: Յանկարծակիի եկած կաքաւ մը երբեմն երբեմն կ'ծկուելով հողաբլուրի մը կշտին դանդաղօրէն կը թռչէր տեղատարափի տակէն...: Երկնքէն վար թափող յորդահոս ջրվէժի պատճառաւ կը մեղմանար հրացանիս հարուածը, որ հազիւ թէ կը շառաչէր խարապանի մը հարուածի նման, սակայն գորշափետուր թռչունը կը թաւալէր արեան մէջ՝ իր փետուրներուն վրայ:


Թրգմ. Յ. Գ. ԱՇԼԴԵԱՆ

ԿԻ ՏԸ ՄՕԲԱՍԱՆ

Մնացեալը յաջորդով

Փ Ա Ղ Ն Ա Ձ Ո Ի Կ Բ

Եւ ո՛չ մէկ կենդանական դասակարգ իր մէջ կը պարունակէ այնքան տարօրինակութիւններ որքան ձուկերը: Ասոնց մէջէն



Քաղնաձուկը արժանի է պատուոյ տեղը գրաւելու. իր բոլոր գործարաններն ալ զարմանալի յօրինուածք մը ունին և հիմնովին կը տարբերին ամէնէն մօտիկ ընտանիքի պատկանող ձուկերու գործարաններէն:

Նախնեաց բանաստեղծական երեւակայութիւնը քաղէն ա-

ռասպելական կենդանի մը ստեղծած էր առիւծի գլուխով ու օձի տտունով: Մեր պատկերէն կը տեսնուի որ եթէ Քաղնաճուկին պոչը իր երկարութիւնովը կը նմանի քիչ թէ շատ սողունի մը պոչին, գլուխը շատ հեռի է ո՛ր և է նմանութիւն ունենալէ առիւծին վէս գլխին:

Քաղնաճուկը սովորաբար մէկ մէդրէ աւելի մեծութիւն ունի. մորթը կակուղ և փայլուն է: Գլուխը թանձր ու տձեւ՝ տհաքին աչքեր կը կրէ առանց թարթիչի: Իր սովորական լուղակներէն զատ մարմինն երկու կողմերը կը գտնուին կարգաւ տարբեր գործարաններ, գուցէ վեցերորդ զգայարանք մը, որու պաշտօնը կ'ենթադրուի թէ ձուկին՝ ջուրին մէջ դէպ ի վեր բարձրանալու ծառայելն է: Քաղնաճուկին հաւկիթը խիստ խոշոր է, կարծր, տափակ ու աղուամազոտ:

ԳՐԻԳՈՐ ԷՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ հետեւեալ աշխատասիրութիւններու կեդրոնատեղին է Պէրպէրեան--Տէմիրեան Ընկ. գրատունը՝ Պապ Ալի ճատտէսի թիւ 38, Պէրպէրեան տպարան:

1. Պատկերազարդ բնական, քաղաքական եւ տնտեսական Աշխարհագրութիւն՝ Տարր. դասընթացքի կարգաց համար 2,50

2. Պատկերազարդ բնակ. քաղաքակ. եւ տնտես. Աշխարհագրութիւն՝ Մէջին դասընթացքի կարգաց համար 4

3. Պատկերազարդ բնակ. քաղաք. եւ տնտես. Աշխարհագրութիւն, Բարձրագոյն դասընթացքի կարգաց համար 6

Վճարմունք կանխիկ, մեծաքանակ գնողաց աւելի զեղչ:

Ստացանք Դրավաճառ Զարեհ Էֆ. Թորոսեանի նոր հրատարակած ԴՊՐՈՑԻ ԳԻՐԲԸ, պատկերազարդ, Նախակրթարաններու համար, Տարրական Ընթացք, Բ. Տարի:

Կը գտնուի Հրատարակչին Կեդրոնական Դրատունը, Պ. Պոլիս Զագմագճըլար եօգուշու, թիւ 64: Գին 4 դահեկան:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Մանիսա. — Գ. էֆ. է. — Գին 12 դր2. 100 հատ.

Թօքատ. — Խ. էֆ. Թ. — Ձեր յանձնարարած 400 այցեքարդերը տեղերնին ղրկուեցան, միւս մասին համար արդէն նամակ գրած ենք ձեզ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

Ն Շ Ա Ն Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ԽՐԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՏՊԵՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱՆԻՉ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Ն Շ Ա Ն Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ Ալի ճատտէսի, Թիւ 38, Մանգուճէի տպարանին կից

(אָפּגאָבן און אָפּהאַנגן)

Ինչպե՞ս օգտագործել՝ մաթեմատիկական լուծումներ

[illegible]

առաջնական կենդանի մը ստեղծած էր առիծի գլուխով ու օտի
առունով։ Մեր պատկերին կը տեսնուի որ եթէ Բաղնաձաղին
պոչը իր երկարութիւնովը կը նմանի քիչ թէ շատ սողունի մը
պոչին։ զրոյսը շատ հեռի է ո՛ր և է նմանութիւն ունենալէ առ-
իւծին վէտ գլխին։

Պաղնաձաղի ստորագար մէկ մեզրէ աւելի մեծութիւն ունի.
մարմը բախուղ և փայլուն է։ Դրոյսը թանձր ու ամու՛ տհազին
աչքեր կը կրէ առանց թորթիջի։ Իր ստորական լուղակներէն
զատաւ իր ստորական լուղակներէն զործարանն

Ա Փ Օ Ս Թ Օ Լ Ի Ք Ի Ն Թ Ի Թ Ի Ի Թ Ի Գ Օ Ն Ի Ա (ՃԵՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանս կ'աւանդէ՝ մեր երկրին մէջ գտնուող Ամերիկեան
միւս գոլէճներուն յար և նման ծրագրով մը՝ Օսմ., Հայ., Անգլ.,
Ֆրանս., եւ Յուն. (Յունաց համար) լեզուներ, նաեւ Բնական,
Բնապատմական, Ուսողական, Փիլիսոփայական եւն. գիտու-
թիւններ, իսկ իրրեւ արուեստ կ'ուսուցանէ կահագործութիւն,
լուսանկարչութիւն և ջութակահարութիւն։ Բաց աստի յառաջի-
կայ տարեշրջանէն սկսեալ պիտի հաստատուէ երեք տարուան

Վաճառականական Դասընթացք

մը՝ ուր մասնաւոր խնամքով պիտի դաստիարակին գործնականա-
պէս Առեւտրական Աշխարհ., Թուար., Տոմարակալութ., Օրէն-
գիտութիւն, Վաճառականական և Աւելանաւորական գործողու-
թիւններ, Պաշտօնական և ոչ-պաշտօնական ամէն տեսակ գրու-
թիւններ՝ Օսմ. Հայ., և Ֆրանսերէն լեզուներով, եւն. եւն.,
եւ այն ճիւղին աշակերտները ստիպեալ չպիտի ըլլան գոլէճա-
կան միւս դասերուն հետեւելու։ Տարակոյս չկայ թէ այս նորու-
թիւնը որ կը պակսէր մեր մէջ՝ մեծ օգուտներ պիտի ընծայէ հա-
սարակութեան։ Գիշերօթիկներու դպրոցական տարեթօշակն է
միայն 10 Օսմ. ոսկի, նոր տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 11/24
ին։ Աւելի մանրամասն տեղեկութեան համար գիմել առ Տնօրէնն
Վեր. Տքդ. Ա. Յ. Հայկազեան, ի Գոնիա։

Թարգմ. — Ի. Է. Բ. — Ձեր յանձնարարած 100 պոյնտիզեցի տոմար
կին զրկուեցան միւս մասին ամօր արգէն նախկ զրա՛մ եւր մեզ։

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ Խորհրդարանի Բաժանորդագրութեան Ժ.
ն եւ է գործաւարտութեան առթիւ հարկ եղած գիմում, գրութիւն
կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

Ա. Ե. Ա. Ե. ԳԵՐԳԵՐՍԻԱՆԻ

որ միակ փայլին ու գլխաւորապէս Ե թերթին։

ԽՈՐՀԱՐԱՆԻ ԱՐՏՈՒՄԸ

ԱՐՏՈՒՄԸ ԼՈՒՍՈՒՆԵԼՆ

Գ. Երթ, Պապը Ար. Լուստիս, Գր. 33, Մանգու միջնադարուն կից